334. Ինչպիսի՞ նախադասություններ են տրվածները: Դրանք ընդարձակի՛ր, դարձրո՛ւ յոթ-ութ բառանի:

Երկիրի մի պտույտը արևի շուրջ մի տարի է :
Հասկանում ենք, որ լքված շենքը վախենալու է :
Ընկերները հեռանում են իմ տնից քանի որ գիշերվա ժամը 03:30 էր :
Մոռացել ես, որ հազար դրամ պետք է տաս, պարտք ես:
Գտա վեց միլիոն դոլար և այդ փողը կօգտագործեմ Հայաստանի համար:

335. Նախադասություններն ընդարձակի՛ր երկուական բառով:

Մենք պետք է փորձենք հասկանալ:
Աղջիկները կպատմեն Արատեսի մասին :
Մեծերը կլսեն, որ դու գնում ես պարապմունքի:
Կընտրեք ինձ, որոհետև ես լավ տնօրեն եմ:
Ճամփորդը հոգնած վերադարձավ անտառ:

336. Նախադասությունները պատճենիր և դրանցում սևացրու այն բառերը, որոնք պատասխանում են փակագծում նշված հարցերին:

Մի **հարուստ** մարդ իր **փոքրիկ** խանութում **արդար** մեղր էր ծախում: (ինչպիսի՞)
Փաթեթում **բամբուկե** փորագրված գավազան էր, **փոքրիկ**, ասեղնագործ թասակ և **սև** ու **դեղին** թիկնոց, որի **լայն** օձիքի վրա **ապշեցուցիչ գեղեցիկ** նախշեր էին գործված: (ինչպիսի՞)
Մեզնից **ոչ հեռու** կանգնած մատղաշ ծառը կորացել էր, իսկ նրա կատարին հաստ օղակով կախված **լիանայի վրա** մի թռչուն էր թառել: (որտե՞ղ)
Բեռնատարները **առավոտյան** պետք է շարժվեր գործարանից: (ե՞րբ)
Մի բոպե լիանայի վրա նստած մնալուց հետո թռչունը ցած թռավ: (ե՞րբ)
Այդ ընթացքում ծառի **գագաթին** բարձրացած որսորդը երկար պարաններով երկու մեծ պարկ իջեցրեց, որոնց մեջ չղջիկներն էին: (որտե՞ղ)
Առավոտ ծեգին հավաքեցինք **մեր հանդերձանքը** և ճամփա ընկանք: (ի՞նչը)

Կարդա տեքստը և հիշիր

Նախադասության գլխավոր անդամներ են համարվում ենթական և ստորոգյալը, որոնք արտահայտում են նախադասության հիմնական ասելիքը, մյուս անդամները կոչվում են երկրորդական անդամներ կամ լրացումներ: Լրացումները կարող են լինել ենթակայի լրացումներ և ստորոգյալի լրացումներ: Այն նախադասությունը, որը կազմված է միայն մեկ ենթակայից և ստորոգյալից, կոչվում է պարզ համառոտ նախադասություն, եթե գլխավոր անդամներից բացի նախադասության մեջ կան երկրորդական անդամներ, ապա այդ նախադասությունը կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն: Եթե

նախադասության կազմում կա մեկից ավել ստորոգյալ, ապա նախադասությունը բարդ է: